



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՐԻՄԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
Archbishop Moushegh Mardirossian, Prelate
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԻՊԱՏՈՍ ԱՐՄԵՆ ԼԻԼՈՅԵԱՆ ԱՅՅԵԼԵՑ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

Լուս Անճելլոսի մեջ Հայաստանի Հանրապետության գլխավոր հիւպատոս Տիար Արմեն Լիլոյեան Չորեքշաբթի, 31 Յոկտեմբերի կեսօրին այցելեց Ազգային Առաջնորդարան եւ ընդունուեցաւ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի կողմէ:

Հանդիպումին ներկայ եղան Մեծի Տանն Կիլիկիոյ երեց միաբաններն Գերշ. Տ. Եփրեմ Արք. Թապազեան, Կրօնական Ժողովի ատենապետ Գերայ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան եւ Ազգային Վարչութեան անդամներն Տիար Վահան Պզտիկեան:

Հայրենի ներկայացուցիչը տեղեկութիւններ փոխանցեց Հայաստանի կացութեան մասին: Խորհրդակցութեան նիւթ եղան Հայ Դատի ներկայի աշխատանքները, ինչպէս նաեւ՝ ամիս մը ետք նախատեսուած աւանդական թելեթոնն ու զայն կանխող կարգ մը ձեռնարկները: Առաջնորդ Սրբազանը ծանօթութիւններ փոխանցեց Ուաշինկթըն իր այցելութեան եւ ընդհանրապէս Ազգ. Առաջնորդարանի գործունեութեան ու թեմական ծրագիրներու մասին, միաժամանակ բարձր գնահատելով Տիար Լիլոյեանի ու հիւպատոսարանի դերակատարութիւնը:

Հանդիպումի աւարտին, Առաջնորդ Սրբազանն ու Գլխավոր Հիւպատոսը յուշանուէրներ փոխանակեցին, ապա Առաջնորդ Սրբազանը մասնակիցները հիւրասիրեց ճաշով:

THE HONORABLE CONSUL GENERAL OF ARMENIA ARMEN LILOYAN VISITS THE PRELACY

On Wednesday, October 31st, the Honorable Armen Liloyan, Consul General of the Republic of Armenia in Los Angeles, visited the Prelacy and was welcomed by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate.

Participating in the meeting were H.E. Archbishop Yeprem Tabakian, Very Rev. Fr. Muron Aznikian, Chairman of the Religious Council and Executive Council member Mr. Vahan Bezdikian.

Among the topics of discussion was the current state of affairs in Armenia, the recent activities in pursuit of the Armenian Cause, as well as the upcoming Telethon and various other events. The Prelate conveyed details of his recent trip to Washington, D.C., and the general activities of the Prelacy and

parishes. The meeting concluded with the Prelate commending the efforts of the Consul General and the Consulate as a whole. Following the exchange of mementos the Prelate hosted lunch for the honorable guest and meeting participants.